

Ապա-Իւ-Համբարն ցոյց տար, հաւատաւ որ այսօրուանէն շատ աւելի կը վարձատրուէր:

— Բայց—ընդմիջեցի—Վաչնակցութիւնը՝ ինչ որ ալ ըլլած իր թերութիւնները, նիւթական ակնկալութիւններու, վարձատրութեան յոյսով բան մը չենք:

— Տղայ ես դուն, ես բաւական փորձառու եմ մարդիկն ու իրերը ճանչնալու համար: Զերիններն ալ, մերիններն ալ ուրիշ բանի չեն փոփոխիր, ուրիշ բան ըրած չունին, բայց եթէ կոտորուել այս երկիրը, քսակներն պարարտացնել: Այսպէս կընեն Սրբիւ-Համբար մարդիկը երկու Այսպէս կընեն Իթթիհան մարդիկը այսօր, ու ձեր Վաչնակցութիւնը անոնց սեղանին փշուրներովը իր փորը կշտացնել կը փորձէ:

Փաշան լռեց, կարծես կը զգար որ շատ յոռաջ գացած էր: Սաֆիլէթ պէշ ճնշուած երեսոյթով խորունկ խորունկ կը մտածէր: Նկատեցի որ անպատշաճ պիտի ըլլար աւելի երկարել տեսակցութիւնը: Ոտքի ելայ հրամայտ առնելու համար:

— Երբեմն եկէք հոս ըսաւ Փաշան:

— Կը տեսնուիք, յարեց Սաֆիլէթ պէշ: Ու մեկնեցաւ, առաջին աթիւ ծերունի Փաշան նորէն մտիկ ընելու փութագով:

Վ. Ս.

ԳՍՐՁԵԱԼ ԳՐԱԿԱՆ ՅՕՆԳԻ ԽՆԴԻՐԸ

Տառերի գիւտի 1500 ամեակի և ապագրութեան 400-ամեակի յաւերժացման համար առայժմ առաջարկուած երկու միջոցների՝ դպրոցական թէ գրական ֆոնդի մասին մեր մտնուում հեղհեղեղ խօսք է լինում և կարծես հարցը աւելի սկզբունքի բնաւորութիւն է ստանում, որը ցանկալի բանակուօւի ձեւ է:

«Հովիտի» № 32 ում պ. Գ. Օհանեանը իմ «Գպրոցական թէ գրական ֆոնդ» յօդուածի աթիւ գետեղել է իր կարծիքը և աշխատում է ապացուցել, որ ներկայ պայմաններում դպրոցական ֆոնդը գերադասելի է: Խնդրի բուն նիւթից դուրս համարելով ուսման կողմից, որ ֆոնդի և երբ առաջարկելու հարցերը, ես մասնանիշ կանեմ մի հանգամանք: Թուական տեղեկութիւններով բոլոր թեմերի առաջնորդները կարող են հաստատել, որ մեր թեմերում հայկական և պետական ուսումնարանների և սրանցում սովորող մանուկների թիւն աւելի է, քան այդ դպրոցների սաների և դասատուների համար եղած ձեռնարկներն ու ընթերցանութեան գրքերը: Հետագրքը քուսեցէջ հէնց ուսման տարուայ սկզբում դպրոցներում դասադրքերի և օժանդակ միջոցների շուրջը դարձող հարցերով և կը տեսնէք, որ դասատու յաճախ չուարում է՝ չիմանալով ինչ դասադրք ընտրէ, ինչ օժանդակ աղբիւրներ նշանակէ, ինչ ընթերցանութեան գրքեր տայ: Հէնց անցեալ տարի կարծեմ Բարեգ. Ընկ. գիւղական մի ճիւղ մօտ 200 ա. էր փոխադրել Թիֆլիզի կենդրոնին ժողովրդական գրագարանի համար գրքեր գնելու: Թիֆլիզի վարչութիւնը կարողացել էր միայն 160 ա. համա-

պատասխան գրքեր գնել, մնացեալ 40 ա. ստիպուած էր եղել վերագարձել, որովհետև չկան գրքեր, որովհետև գրականութիւնն աղքատ է. այդ ապացոյց չէ. որ այնուամենայնիւ գրքի պահանջ կա, իսկ դիւր չկայ: Հարցրէք հէնց դպրոցների դաստիարակներին և վարիչներին և կը տեսնէք, որ յաճախ Բ. դասարանից յետոյ աշակերտները այլևս գրքեր չեն գտնում հայերէն լեզուով կարդալու: Չէ որ միայն հայ դպրոցներում սովորողները չեն, որ կարող են հայերէն կարդալ, այլև պետական դպրոցներում սովորողները: Կուցէ կառարկեն, թէ այդ դպրոցի հայ սաները ընդհանրապէս հայերէն գրքեր չեն կարդում, բայց այդ յանցանքը դասատուինն է. իսկ որ նրանք գրագէտ են և կարող են կարգաւ այդ անկասկած է. կարծում եմ, որ եթէ տոկոսներով և համեմատութեան ճանապարհով լուծելու լինինք խնդիրը, կը տեսնենք որ հայ լեզուով կարդացողների թիւը այժմ իսկ աւելի է, քան հայերէն գրքեր կան: Անշուշտ ոչ մի խօսք չի կարող լինել այն մասին, թէ դպրոցական ֆոնդը անողւտ է կամ աւելորդ. այստեղ միայն կարիքի և նրան բաւարարելու համեմատական աստիճանի մասին է հարցը և ինչ թուում է, որ գրական ֆոնդի կարիքն աւելի է և նրան բաւարարելու հնարաւորութիւնը համեմատաբար մեծ: Զջմարիտ է, գրական ֆոնդի իրականացման հետ կապուած են մի շարք կողմնակի դժուարութիւններ, բայց այժմ խնդրին տեսականօրէն ենք մտնում և այդ դժուարութիւնները մի կողմն ենք թողնելու:

Թէև պ. Գ. Օհանեանը գրում է որ՝ «...ներկայումս մասնագէտ սյծեր չունինք, որոնք ստիպուած մասնաւոր գործերով զբաղուած լինէին», բայց մտնում է երկի, որ կան այդպիսիները, որոնք թողել են դպրոցական աշխարհը և մեկ աւաւարական-բանկային առաջնորդ և որ հէնց մեր գրականութեան մէջ եզրող աշխատատարները մեծ մասամբ գրողներն են ոչ անմիջապէս գրականութեամբ, որովհետև այս պարագայները նրանց չի սպասուում, այլ կողմնակի աշխատանքներով են իրենց տեսական գրութիւնը բարելաւում: Արդեօք հէնց այժմեան մեր գրականութեան աշխատատարները ապահով են, որդեօք նրանք մատնուած չեն բախտի բերումներին, միթէ գանազան միջոցներով կազմուած ապահովութեան յօրիւ եաները ապացոյց չեն, որ գրական աշխարհի գործիչները իրօք ապահովութեան կարիք ունին:

Զջմարիտ է, գրականութիւնը դպրոցին հակադրել չի կարելիք, սակայն և դպրոցն այն ժամանակ է առաջ գնում և պտուղ տալի, երբ լուսնուած է ստանում. կարծում եմ խնդիրը քանակի մասին չէ, այլ որակի: Եթէ ունենանք հարաւոր կիսագրագէտներ, արդեօք աւելի օղուտ կունենայ մեր ժողովրդի յառաջադիմութիւնը, թէ տասնեակ լուս կրթուածներ: Ուսման դպրոցի, հարցը բոս էութեան ժողովրդական հարց է և ժողովրդի անմիջական պարտականութիւնն է, որին նա բաւարարելու է ինքն իր ոյժով, իսկ գրական աշխարհին ապահովելը աւելի գիտակ անձանց պարտականութիւնն է և պէտք է որ նախանւնողը լինի հէնց դպրոցական աշխատատարը իր իսկ շահ-

րի տեսակէտից կան պատմական դրութիւններ, երբ մի պատրաստի ոյժն աւելի է գործ տեսնում, քան հարկուրտը կիսակիրքները:

Հարցը աւելի պատմական-հասարակագիտական է և այս տեսակէտից էլ պէտք է վճռել խնդիրը:

Pessimist

ԻՄ ԵՆՈՐՀԱՒՈՐԱՆՔԸ

«ՄԵԱԿ»-Ի ՅՈՐԵԼԵԱՆԻՆ

III

Հեռացնելով իրենից մտաւարականներին՝ Արծրուծին շրջապատեց իրեն ինքնուսներով և կամ, ինչպէս ինքն էր գրում՝ «ձկնորսներով»:

Այդ ձկնորսների պարագլուխը՝ հանգուցեալ Յակոբ Մելիք-Յակօբեանն էր—Բաֆֆին:

Կարդանք, ընթերցող, այն գեղեցիկ նկարագիրը, որ հանգուցեալը արել է «Մշակի» նոր կազմի մասին, իր «Հայ երիտասարդութիւնը աշխատութեան մէջ»:

«Ես երբէք մտածնալ չեմ կարող,—գրում է Բաֆֆին,—1872 թուականը, երբ սկսուեցաւ հրատարակուել «Մշակ» լրագիրը: Ի՞նչ կեանք էր տիրում այն մասնակի թիֆլիզում. ինչ դրութեան մէջ էր գաւառների վիճակը:

«Ամեն տեղ,—պատասխանում է ինքն իրեն Բաֆֆին,—տիրում էր մի տեսակ անշարժութիւն, մի տեսակ թմրութիւն, մի տեսակ մեռելութիւն: Եանկարծ, կարծես մի դիւթական զաւազանի հարուածից զարթնեցաւ կեանքը՝\*) Ոչ ոք չէր հաւատում, թէ այսպէս կարող էր լինել: Հաւատում էր միայն երիտասարդների մի փոքրիկ խումբը: Ես յիշում եմ այն գեղեցիկ տարիները, այն հրաշալի գիշերները, երբ այդ խումբը հաւաքուած խմբագրատան մէջ, կարդում էին, ծխում էին և վիճում էին: Մեզանից շատերը հագնեւորին շապիկ չունէին, մտնում էին այնտեղ բուրսովին պատաստատած կօշիկներով, այնուամենայնիւ մենք ամենքս էլ Հատալիստի յոյսով հաւատում էինք թէ կը փրապեանք մի մեծ ապագայի: Ակրում այս լրագրի շուրջը խմբուեցաւ համալսարանական դիպլոմատը երիտասարդութիւնը: Բայց նրանք չուսով ցրուեցան, կարծես թէ գործը խորթ թուեցաւ իրենց: Նրանք չհաւատացին այս լրագրի հակառակը: Մնացին դիպլոմից գուրկ ինքնուսները—ինքնակրթութեամբ զարգացած մանկաին,—անյաջողութիւնների տակ նշուած, ամեն տեղից հալածուած, բայց դարձեալ իր վեճութիւնը պահպանած մանկաին: Ահա այդ ուժերը իրենց ուսնրի վրայ բարձրացրին «Մշակի» դրօշակը:

«...Եւ այսպէս, համալսարանականները հեռանալով «Մշակից», ապարդէզը մնաց ինքնուսներին: Այդ լրագրի խմբագիրը խիստ ճիշտ համեմատութիւն արեց, թէ նա թողեց զպիրներին ու փարիսեցիկներին և իրեն շրջապատեց հասարակ ձկնորսներով—ժողովրդի շփշաջած զաւակներով: Բայց պէտք էր ցոյց տալ հասարակութեանը, թէ այդ դիպլոմից գուրկ ուժերով կարելի էր կազմել մի նոր շխօլա: Գործիչների առաջ գրած էին անագին դժուարութիւններ անագին պարտականութիւնների հետ: Հողը միանգամայն խողանացած էր: Այլստանալի բաժանութիւն չկար: Ուզում եմ ասել՝ չկային օրգաններ, որոնց իւրաքանչիւրը յանձն առնելով մշակութեան մի ճիւղը սկսէին աշխատել . . . . Եւ այս պատճառով «Մշակը» ստիպուած էր իր թերթիւրը բեռնաւորել ամեն տեսակ նիւթերով: Պուրջիցիստիկան և ընկերային կեանքը նկարում էր պատկերներ ժողովրդի կեանքից, ցոյց տալով նրա ազդեց այնպիսի կեանքները: Տեսնուողները (ինքնուսը արդիօք) հարուածում էր անխիղճ վարժապետի և հարստահարիչ կապիտալիստի յարարութիւնները մշակ դասի հետ: Մօրալիստը խորտակում էր այն սև նախապաշարմունքները, որ ծանրացած էին ամբոխի հողու վրայ, և մատուցանում էր բարոյական նոր սնունդ: Առողջ խօսքը բղխում էր կենդանի ազդիւրից և տարածում էր դէպի ամեն կողմ նոր մտքեր: Կրիտիկական ոգին գործում էր իր անխնայ անգթութեամբ: Նա մտնում էր հեղինակի կարիները, վաճառականի խանութը, արհեստագործի գործարանը, ծառայողի ստանը, դիւզացու խրճիթը, մեծատան սալօճը, վարժապետի գայրոցը, կղերի մենարանը,—մի խօսքով կեանքի բոլոր ծաղիկներում պտուտում էր նա, և խաւարի միջից գուրս էր քաշում, մերկացնում էր այն ամենը, ինչ որ ազդեց էր, ինչ որ անարժան էր: Այդ բոլորը գործում էր այն շխօլայի մէջ, որ հիմնեց «Մշակը», օւր երիտասարդութիւնը ուսանում էր և ուսուցանում էր:

«Ես երբէք չեմ կարող մտածնալ,—շարունակում է Բաֆֆին,—այն աղմկալից ժողովները, որ կազմում էին այդ լրագրի խմբագրատան մէջ միջանի տարի առաջ: Եթէ ես ունեցել եմ միջանի ոսկի բոպկներ,—գրանք պատկանում են այն ժամանակին: Ժողովների մէջ ոգնորում և բողբոջում վիճարանութիւնները տեսւմ էին շատ անգամ մինչև դիշերուայ ժամի երկուսը: Փաքրիկ, բոլոր նիւթական միջոցներից գուրկ բայց բարոյապէս հարուստ խումբը ծրագրում էր հակառակն արթնեցուցնել: Այդ գօնջիտութիւնը, երեակայութեան այդ տեղապին բորբոքումը, թէև մասամբ ծիծաղելի էր (այլ ոչ բողբոջին, հա), բայց գեղեցիկ էր, որպէս մանուկի ժպիտը, որ արտայայտութիւն է նոր սկսուող կեանքի: Իդէալների խորին արթնցումեան մէջ, ամեն մի երիտասարդ մտածնում էր իր վիճակի աստանութիւնը և մտածում էր, վիճում էր հասարակաց բարբոքութեան մասին: Կէս գիշերից յետոյ նիստը վերջանում էր: Խումբը ցրել էր զալիս բուրձարների վրայ, երբ բոլոր հիւրանոց-

\*) Ընդգծումները միշտ իմն են: